ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՍԱՄՎԵԼ ՀԱԼԱՋՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ նկարիչ Սամվել Հալաջյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոցի հ.40 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԱՄՎԵԼ ՀԱԼԱՋՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ նկարիչ Սամվել Հալաջյանը (Սամուել Հալաջ) ծնվել է 1952թ. օգոստոսի 19-ին:

Ավարտելով 8-րդ դասարանը, ընդունվել է Փանոս Թերզեմելյանի անվան գեղարվեստի ուսումնարան և գերազանց ավարտելուց հետո՝ 1970-1972թթ. ծառայել է սովետական բանակում: 1976թ.-ից մասնակցել է բազում միջազգային ցուցահանդեսների:

1988 թվականից դարձել է Հայաստանի նկարիչների միության անդամ:

1990-2006թթ. եղել է նկարիչների միջազգային միության (ՅՈՒՆԵՍԿՕ-ի) անդամ: մասնագիտական կրթությունը ստացել է Երևանի Թերլեմեզյանի անվան նկարչական գունանկարի բաժնում:

Սամվել Հալաջյանի նկարները ցուցադրվել են Մոսկվայի Արևելյան արվեստի թանգարանում և ՀՀ ազգային պատկերասրահում, Բակերոֆիլդի ժամանակակից արվեստի թանգարանում: 2000թ. անհատական ցուցահանդես է ունեցել Նյու-Յորքի ժամանակակից արվեստի թանգարանում:

Նրա աշխատանքները գտնվում են Ավստրիայի Artstetten Castle թանգարանում, Մոսկվայի արևելքի ժողովուրդների թանգարանում, Կալիֆոռնիայի Bakersfield Museum of Art-ում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, ինչպես նաև ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Գերմանիայի, Նիդերլանդների, Կանադայի, Իտալիայի, Թուրքիայի, Անգլիայի և այլ երկների մասնավոր հավաքածուներում:

2005թ. Սամվել Հալաջյանը, հատուկ արվեստագետի կարգավիճակի հրավերով, բնակություն է հաստատել Լոս Անջելեսում, որտեղ էլ 2006թ. ստացել է քաղաքապետի հատուկ մրցանակ՝ արվեստում իր յուրահատուկ ներդրման համար: 2008 թվականին մասնակցել է նյույորքյան համաշխարհային Նյու-Յորք Ֆրիզ ցուցահանդեսին: Լինելով բազմակողմանի զարգացած և շատ աշխատասեր, ստեղծել է իր ուրույն, ինքնատիպ աշխարհը, նուրբ կարպետի թելին նմանվող իր գծով: Նկարել է գեղեցիկ կտավներ, որոնք հիացմունք են առաջացել շատ արվեստասերների մոտ: Սամվել Հալաջյանի մասին գրել են բազմաթիվ ամերիկյան արվեստաբաններ և նա մշտապես ցուցադրվելով վառ է պահել հայ արվեստագետի անունը:

Սամվել Հալաջյանը մահացել է 2024թ. մայիսի 9-ին:

Հայ նկարիչ Սամվել Հալաջյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Չարենցի փողոցի հ.40 հասցեում փակցնելու միջնորդությունը ներկայացվել նրա որդու՝ Մինաս Հալաջյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ